0870627

# Համաձայնագիր

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման» թիվ 011/11/11/2014 պայմանագրում և դրա հավելված 1-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք.Երևան 10.01.2017թ.

«Յուքոմ» ՍՊ Ընկերությունը, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, ով գործում է 01.06.2016թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակազմ ՊԿՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Սամվել Մուրադյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1. Հետագա համագործակցության նպատակով՝ հիմք ընդունելով ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և Օպերատորի միջև կնքված «էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման» թիվ 011/11/11/2014 և թիվ 041/06/02/2014 պայմանագրերը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1120-Ն որոշմամբ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1. «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման» թիվ 011/11/11/2014 պայմանագրում, այսուհետ՝ «Պայմանագիր», «ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Եղիշե Խերանյանի» բառերը փոխարինել «ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակազմ ՊԿՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Սամվել Մուրադյանի» բառերով:

1.2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.

*1.Տրամադրվող ծառայություն(ներ)՝*

| N | Նկարագրություն | Ամսավճար (ՀՀ դրամ) | Հասցեներ |
|---|---|---|---|
| 1 | U!Phone Corporate+<br>011516310; 011516311; 011519038; 011519306; 011519307; 011521225; 011521276; 011521960; 011521972; 011521973; 011523903; 011523922; 011526297; 011526869; 011529307; 011529310; 011529320; 011529349; 011529350; 011529900; 011564050; 011564546; 011564868; 011566065; 011568409; 011585499; 011523932; 011523933; 011523934; 011523935; 011523936; 011523937; 011523938; 011523939; 011523940; 011523941; 011523942; 011523944; 011523945; 011523947; 011523733; 011525794; 011565118; 011585851; 011529332; 011585178; 011585196 | 117 500 | ք.Երևան, Վ.Սարգսյան 3 |
| 2 | U!Phone Corporate+<br>011230301; 011234702; 011235086; 011230109 | 10 000 | ք.Երևան, Կոմիտասի պ. 51շ., հարկ 4 |

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 127500 (Հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):»:

1.4. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

1.5. Թիվ 041/06/02/2014 պայմանագիրը համարել լուծված:

*2. Համաձայնագրի գործողության ժամկետը*

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է անժամկետ:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

*3. Եզրափակիչ դրույթներ*

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*4. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները*

**Օպերատոր**

«Յուքոմ» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք.Երևան, Գր.Լուսավորիչ 9
Հեռ.՝ 374 60 444466
Ֆաքս՝ 374 11 400401
ՀՎՀՀ 00024873
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

Վ. Ասատուրյան

**Բաժանորդ**

ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակազմ
ՊԿՀ
Իրավ. հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3
Գործ. հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02508054
Հ/Հ 900011012870
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Ս. Մուրադյան